ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2 ապրիլի 2012թ. **N 96-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, 89-րդ հոդվածի 1-3-րդ մասերով և 123-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին՝

1) հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հանրային հեռուստատեսությամբ անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) հանրային ռադիոյով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2012թ. ապրիլի 2-ի թիվ 96-Ա որոշման

Կ Ա Ր Գ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին նախընտրական քարոզչության ժամանակ հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին (այսուհետ՝ կուսակցություն) նախընտրական քարոզչության ժամանակ հանրային հեռուստատեսությամբ և (կամ) հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրվում է հավասար պայմաններով՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և սույն կարգի պահանջներին համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ եթերաժամ տրամադրվում է ժամը 18.00-ից սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությանը նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրվում է ժամը 13^{30}-ից և ժամը 21^{40}-ից՝ սույն որոշման N 3 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

4. Տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով, հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից նշված ժամանակահատվածը կարող է տեղաշարժվել, բայց ոչ ավելի, քան 30 րոպե:

5. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությանը, նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով, սույն կարգի 2-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, հանրային հեռուստատեսությունը տրամադրում է 60 րոպե անվճար և մինչև 120 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամ, ընդ որում՝

1) 2012թ. ապրիլի 8-ից մինչև 2012թ. ապրիլի 22-ը ներառյալ՝ օրը 2 րոպե անվճար և մինչև 4 րոպե վճարովի հիմունքներով.

2) 2012թ. ապրիլի 23-ից մինչև 2012թ. ապրիլի 28-ը ներառյալ՝ օրը 2 րոպե անվճար և մինչև 5 րոպե վճարովի հիմունքներով.

3) 2012թ. ապրիլի 29-ից մինչև 2012թ. մայիսի 4-ը ներառյալ՝ օրը 3 րոպե անվճար և մինչև 5 րոպե վճարովի հիմունքներով:

6. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությանը, նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով, սույն կարգի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածներում, հանրային ռադիոն տրամադրում է 120 րոպե անվճար և մինչև 180 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամ, ընդ որում՝

1) 2012թ. ապրիլի 8-ից մինչև 2012թ. ապրիլի 25-ը ներառյալ՝ օրական երկու անգամ՝ 2-ական րոպե անվճար և մինչև 3-ական րոպե վճարովի հիմունքներով.

2) 2012թ. ապրիլի 26-ից մինչև ապրիլի 28-ը ներառյալ՝ օրական երկու անգամ՝ 2-ական րոպե անվճար և մինչև 4-ական րոպե վճարովի հիմունքներով.

3) 2012թ. ապրիլի 29-ից մինչև 2012թ. մայիսի 4-ը ներառյալ՝ օրական երկու անգամ՝ 3-ական րոպե անվճար և մինչև 4-ական րոպե վճարովի հիմունքներով:

7. Նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հեռուստատեսային եթերաժամը տրամադրվում է հանրային հեռուստաընկերության վերգետնյա հեռարձակմամբ «Հ1» առաջին ալիքի եթերում՝ ապահովելով հեռարձակում Հանրապետության ողջ տարածքում, իսկ ռադիոեթերաժամը՝ հանրային ռադիոընկերության 69.7 ՄՀց գերկարճ և FM հանրապետական ցանցով (Երևանում 107.7 ՄՀց)՝ միաժամանակ ապահովելով զուգահեռ հեռարձակում Շիրակի հանրային հեռուստառադիոյի եթերում:

8. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցության ներկայացուցիչներին նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ կամ հանրային ռադիոյով տրամադրվում է ուղիղ եթեր, նրանց ցանկությամբ՝ նաև հաղորդավարի մասնակցությամբ, կամ հեռարձակվում կուսակցության կողմից ներկայացված տեսանյութը:

9. Եթերաժամը տրամադրվում է ըստ հայտերի՝ հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի և Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցության միջև սույն կարգին համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա, որը բոլոր պատվիրատուների համար պետք է սահմանի հավասար պայմաններ:

10. Եթերաժամ տրամադրելու համար պայմանագիր կնքելիս Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցության անունից կարող է հանդես գալ կուսակցության՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովում գրանցված լիազոր ներկայացուցիչը կամ կուսակցության կողմից լիազորված այլ անձ: Պայմանագիր կնքելու համար ներկայացվում է կուսակցության լիազոր ներկայացուցչի վկայականի լուսապատճենը կամ կուսակցության կողմից տրված լիազորագիրը, լիազոր ներկայացուցչի կամ լիազորված անձի անձնագիրը, վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար՝ նաև ՀՀ կենտրոնական

բանկում բացված՝ կուսակցության, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամի ժամանակավոր հատուկ հաշվեհամարը: Պայմանագիր կնքելու համար պետք է դիմել Ռադիոտուն (ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, հեռ. 57-56-18):

11. Ուղիղ եթերի դեպքում կուսակցության ներկայացուցիչը համապատասխանաբար հանրային հեռուստատեսություն (ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26) կամ հանրային ռադիո (ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, Ռադիոտուն) ներկայանում է հերթական եթերաժամից առնվազն 30 րոպե առաջ:

Տեսանյութերը՝ «DV-AVI» կամ «MPEG-2» ֆորմատով, հանրային հեռուստաընկերություն (ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26) ներկայացվում են մինչև հեռարձակման օրը՝ ժամը 14^{00}:

Ձայներիզները («CD»)՝ «WAV» կամ «MP-3» ֆորմատով հանրային ռադիո (ք.Երևան, Ալեք Մանուկյան 5, Ռադիոտուն) ներկայացվում են նախընտրական քարոզչության համար սահմանված եթերաժամի սկզբից առնվազն 2 ժամ առաջ:

12. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի եթերաժամը սույն որոշման համապատասխանաբար N 2 և N 3 հավելվածներով սահմանված ժամանակացույցերին համապատասխան չօգտագործելու դեպքում կուսակցությանը դրա փոխարեն այլ եթերաժամ չի տրամադրվում:

13. Հանրային հեռուստատեսությամբ կամ հանրային ռադիոյով նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով կուսակցությանը տրամադրված եթերաժամն այլ կուսակցության կամ նրա ներկայացուցչի կողմից օգտագործվել չի կարող:

14. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար վճարումները կատարվում են համապատասխան կուսակցության հիմնադրամի միջոցներից՝ անկանխիկ (փոխանցումով):

15. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից կուսակցությանը վճարովի հիմունքներով եթերաժամ տրամադրվում է, եթե մինչև եթերաժամի սկիզբը համապատասխանաբար հանրային հեռուստատեսություն կամ հանրային ռադիո ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի անկանխիկ վճարման (փոխանցման) հանձնարարականը:

16. Նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն երեք ամիս:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2012թ. ապրիլի 2-ի թիվ 96-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին Հանրային հեռուստատեսությամբ եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ	ԱՊՐԻԼԻ																								ՄԱՅԻՍԻ			
ՕՐԸ	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3	4
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																										
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	2	3	7	5	6	8	7	3	7	6	9	8	2	3	7	5	9	3	5	4	9	1	5	5	9	7
«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	9	2	4	3	1	9	4	9	1	7	6	9	1	4	9	7	2	5	3	2	4	4	7	6	2	4
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	9	4	8	6	8	5	7	6	6	4	2	4	3	3	8	1	8	1	6	8	6	8	8	8	9	4	6
«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	4	3	9	8	7	7	5	8	4	9	1	5	2	4	7	5	2	3	2	9	3	1	6	1	3	1	5
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	6	5	6	5	6	8	2	5	5	8	5	2	4	9	9	3	3	4	1	7	7	6	7	3	4	6	1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	3	1	1	3	9	4	4	2	8	6	8	3	7	8	1	4	6	7	4	6	8	7	2	6	1	3	8
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7	6	5	9	4	9	1	3	1	2	9	1	6	7	6	6	9	6	8	2	5	5	5	9	8	8	9
ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	5	7	4	1	1	3	3	9	7	3	3	8	1	5	5	8	1	8	9	1	1	3	9	4	7	5	3
«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	8	8	7	2	2	2	6	1	2	5	4	7	5	6	2	2	4	5	7	4	9	2	3	2	2	7	2

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1-ից 9 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2012թ. ապրիլի 2-ի թիվ 96-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին Հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ		ԱՊՐԻԼԻ																								ՄԱՅԻՍԻ			
ՕՐԸ		8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	1	2	3	4
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																											
«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	1	6	9	9	4	3	9	6	1	5	3	3	4	5	8	4	7	4	8	8	8	3	8	1	6	8	9
	2	7	6	3	9	5	5	8	9	8	2	8	3	9	2	1	6	5	1	8	5	7	8	2	3	8	1	1
«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	9	9	1	8	9	4	7	2	8	3	9	5	2	4	7	7	6	5	7	5	7	9	1	2	4	4	1
	2	3	9	2	8	3	1	5	4	7	9	2	7	6	4	5	3	2	3	6	2	6	4	1	7	2	2	6
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	1	4	1	8	2	5	7	8	1	3	6	7	1	3	8	3	3	1	7	6	1	9	4	2	5	5	7	4
	2	2	7	8	4	4	6	1	1	4	7	7	4	8	9	7	9	3	2	7	4	4	2	4	5	1	7	5
«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	6	7	4	1	3	2	4	8	6	9	1	8	6	9	5	6	8	9	3	3	5	6	7	7	8	2	2
	2	9	8	7	2	6	2	2	6	2	8	6	5	4	1	8	7	4	5	3	9	5	5	5	9	5	6	3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	8	5	3	3	6	1	6	7	5	4	8	2	5	2	4	5	3	6	1	6	2	2	5	8	1	3	6
	2	4	5	4	6	7	4	7	7	1	6	5	6	5	8	9	1	1	7	5	8	1	6	7	4	7	8	4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	3	4	6	7	1	9	1	3	9	8	5	4	8	3	1	1	4	3	5	2	1	8	3	6	3	9	5
	2	8	3	5	5	8	3	6	2	3	4	4	9	1	6	4	2	8	8	4	1	2	1	3	6	6	3	7
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	5	8	5	4	7	5	3	9	2	1	4	6	7	7	6	9	5	8	9	9	4	5	6	4	2	6	3
	2	1	2	9	7	2	7	4	3	6	5	9	2	2	7	2	5	7	9	2	7	9	3	8	8	4	4	2
ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	2	3	7	6	2	8	5	5	7	7	6	7	1	6	2	2	2	1	2	7	3	7	4	9	7	5	7
	2	6	4	6	3	1	8	9	5	5	1	1	8	3	5	3	4	6	4	1	3	8	7	6	2	9	5	8
«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	7	2	2	5	8	6	2	4	4	2	2	9	9	1	9	8	9	2	4	4	6	1	9	3	9	1	8
	2	5	1	1	1	9	9	3	8	9	3	3	1	7	3	6	8	9	6	9	6	3	9	9	1	3	9	9

Ծանոթություն **1. Աղյուսակի «Նախընտրական քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1-ից 9 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է**

2. Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանման դիմաց «1» տողում նշված թիվն այդ օրվա առաջին եթերաժամի, իսկ «2» տողում նշված թիվը՝ երկրորդ եթերաժամի տրամադրման հերթականությունն է: